11473

ՀՍԽՀ

ՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ԾՐԱԳԻՐ

ՀՐԱՄԿԱՋՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ (3-ՐԴ ՏԱՐՎԱ)

(ԸՍՏ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ Հ. Ռ. Խ. № 1515 ՀՐԱՄԱՆԻ)

3(07)
Ծ-89

ՀՐԱՏԱՐ. ՀԱՅԿ. ՀՐԱՀԻՊ ԳԻՎԱՆՋԻԱՆԻ ՔԱՂՐԱԾՆԻ
1928 թ.

11473

15 MAY 2013

25 SEP 2006
1 DEC 2009

ԽՍՀՄ — ՀՍԽՀ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

3(07)
Ծ-89

ԾՐԱԳԻՐ

ՀՐԱՄԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ (3-ՐԴ ՏԱՐՎԱ)

(ԸՍՏ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ Հ. Ռ. Խ. № 1515 ՀՐԱՄԱՆԻՑ)

1003
ԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐ. ՀԱՅԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻ ՔՂԳԲԱՓՆԻ
1928 թ.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍԻՄԱՆԻԿՅԱՆԻ
Անվան

ՀԱՅՊՈՒԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1361
ԳՐԱՌ· 520 Բ· ՏԻՐԱԺ 550

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-ԻՄ.ՍՍՀ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՄԱՆ

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ

31 հունվարի, 1927 թ· **№ 5** Գ· Մոսկվա

Խ·Ս·Հ·Մ· Հեղափոխական Ռազմական Խորհրդի № 1515 հրամանի համաձայն, հրամկազմի քաղաքական պատրաստականության յերրորդ տարվա ծրագրի համար հարկավոր է ղեկավարվել հետևյալ ծրագրերով·

1· *Տնտեսական քաղաքականություն*

2· *Լենինիզմ*

3· *Քաղաշխատանքի դասընթացք («Քաղաշխատանքը ռազմական պայմաններում») հայտարարված Քաղվարչության հրամանների և շրջաբերականների հավաքածվի № 1 (6)–ում առ 6 հունվարի 1927 թ· հրաման № 149*

Ծանոթություն·—Նավատորմի համար քաղաշխատանքի առանձին ծրագիր կտրվի լրացուցիչ:

Հիշյալ ծրագրները 27 թ· ապրիլի 1–ից մինչև 28 թ· ապրիլի 1–ը անցնելով, միջին և ավագ հրամանատարական կազմի համար Խ·Ս·Հ·Մ· Հեղ· Ռազմ· Խոր· № 1515 հրամանով հաստատված ծրագիրը համարվում և վերջացած:

Քաղվարչության պետի տեղակալի ոգնական՝ **ՍԼԱՎԻՆ**

Հանր· Քաղվարչ· ագիտ–պրոպ բաժնի պետ՝ **ԶՈՐԻՆ**

ԾՐԱԳԻՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԸ

1. Հանձնարարություն 1.—Տնտեսական քաղաքականության առաջին շրջանը,—«ռազմական կոմունիզմի շրջան»:
2. Հանձնարարություն 2.—Տնտեսական քաղաքականության յերկրորդ շրջանը,—ՆԵՊ (Նոր տնտեսական քաղաքականություն):
3. Հանձնարարություն 3.—Պետական արդյունաբերությունը և սոցիալիզմի կառուցումը Խ. Մ. Հ. Միության մեջ:
4. Հանձնարարություն 4.—Պրոֆմիությունների դերը սոցիալիզմի կառուցման գործում:
5. Հանձնարարություն 5.—Գյուղական տնտեսությունը:
6. Հանձնարարություն 6.—Առևտուրը և կոոպերացիան:
7. Հանձնարարություն 7.—Ֆինանսական քաղաքականություն:
8. Հանձնարարություն 8.—Տնտեսական քաղաքականության արդյունքները և հեռանկարային խնդիրները:

ՆԱԽԱԲԱՆ

Լենինը ընթացիկ շրջանի մասին, իմպերիալիզմի դարաշրջանի և Հոկտեմբերյան հեղափոխության փորձի վերլուծման հիման վրա: Սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մեր յերկրում: Կուսակցության՝ անցողիկ շրջանի տնտեսական քաղաքականությունը,—վորպես դեպք սոցիալիստական հասարակության կառուցման: ՆԵՊ-ը, վորպես սոցիալիզմին հասնելու անհրաժեշտ մի շրջան:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 1. Տնտեսական քաղաքականության առաջին շրջանը.—«Ռազմական կոմունիզմի շրջան»

Հոկտեմբերյան հեղափոխությունը և խորհրդային իշխանության տնտեսական առաջին անհրաժեշտ ձեռնարկումները, դեկրետներ հողի մասին, բանվորական հսկողության մասին, արդյունաբերության սոցիոլոգական սինդիկատացում, բանկերի ազգայնացումը, պետական պարտքերի վոչնչացումը:

Արդյունաբերության ազգայնացման տարբերային պրոցեսը: Քաղաքացիական պատերազմը: Դեկրետ արդյունաբերության ազգայնացման մասին: Գլավկիզմ: Հացի մենաշնորհը: Մասնատուրան (продразверстка) Աշխատավարձի և սպառման նյութերի հավասարումն:

Քաղաքացիական պատերազմի հաղթական վախճանը, վորպես ռազմական կոմունիզմի քաղաքականության պատմական արդարացում:

1921 թվի գարնան քաղաքական և տնտեսական ճգնաժամը և «ռազմական կոմունիզմից» նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու անհրաժեշտությունը:

ռենցիայի վորոշումների մասին։ 15-րդ կուսկոնֆերենցիան արդյունաբերության հիմնական խնդիրների մասին։

Ոպպոզիցիան 15-րդ կուսկոնֆերենցիայից հետո։ Ոպպոզիցիայի պանիկան միջազգային քաղաքականության խնդիրների և մեր տնտեսական դժվարությունների առաջ։ Ոպպոզիցիայի տեսակետը գյուղի շերտավորման և գյուղի ու քաղաքի փոխհարաբերության խնդիրների շուրջը։ Ոպպոզիցիան նոր կուսակցության կազմակերպման ճանապարհին։ Կուսակցության 15-րդ համագումարի վորոշումները այդ խնդիրների նկատմամբ։

Գրականություն.—Վ. ՍՄՈՒՇԿՈՎ—«Խ. Ս. Հ. Մ. տնտեսական քաղաքականությունը», էջ 40-65։ 15-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումները ընկ. Ռիկովի զեկուցման առթիվ։

Համ. Կ. Կ. (Բ.) Կ. Կ. և Կ. Վ. Հ. միացյալ պլենումի (1927 թ.) վորոշումները ոպպոզիցիայի վերաբերյալ։

15-րդ համագումարի վորոշումները։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 4. Պրոֆմիությանն դերը սոցիալիզմի կառուցման գործում։

Պրոֆմիության դերի տարբերությունը կապիտալիզմի, ռազմական կոմունիզմի և ՆԵՊ-ի ժամանակ։ Պրոֆշարժման կազմակերպչական սկզբունքները։ Պրոֆմիությունների դերն ու նշանակությունը նոր տնտեսական քաղաքականության շրջանում։ Պրոֆմիությունները, վորպես «կոմունիզմի դպրոց»։ Պրոֆմիությունների մասնակցությունը արդյունաբերության

կազմակերպման գործում։ Բանվորների տնտեսական շահերի պաշտպանումը և պայքարը «բյուրոկրատական այլանդակումների» դեմ։ Պրոֆմիությունների տնտեսական աշխատանքը։ Աշխատավարձի կանոնավորման սկզբունքները, հավաքական պայմանագրերը, տարիֆային ցանցեր և հատուցման աշխատանքը։ Աշխատանքի պաշտպանությունը և նրա հիմունքները։ Սոցիալական ապահովագրություն։ Գործազրկություն, նրա վերացման միջոցները, ողնություն գործազուրկներին։ Կոնֆլիկտները մասնավոր և պետական արդյունաբերության մեջ և պրոֆմիության դերը։ 15-րդ կուսկոնֆերենցիան և պրոֆմիությունների 7-րդ համագումարը պրոֆմիությունների հերթական խնդիրների մասին։

Գրականություն.—Վ. ՍՄՈՒՇԿՈՎ—«Խ. Ս. Հ. Մ. տնտեսական քաղաքականությունը», գլ. 9-րդ։

15-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումը ընկեր Տոմսկու զեկուցման առթիվ։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 5. Գյուղական տնտեսություն

Պետարդյունաբերության մերձեցման ձևերը գյուղական տնտեսությանը (առևտուր, կոոպերացիա)։ Մեր գյուղատնտեսական քաղաքականության հիմնական խնդիրը,—գյուղատնտեսական եկոնոմիկայի վերափոխումը, նրա համայնացումը ելեքտրիֆիկացիայի բազայի վրա, տրակտորիզացիա։ Այդ խնդրի կատարման դժվարությունը մանր-բուրժուական տնտեսական ձևերի ու տնտեսական հետամնացության պայմաններում։

Հողաշինարարության ասպարիզում ձեռք առած միջոցները։ Գյուղատնտեսության նոր ձևերի զարգաց-

ման համար ձեռք առած միջոցները։ Գյուղատնտեսական կոոպերացիայի և գյուղատնտեսական վարկի դերը։ Խորհրդային տնտեսությունների դերը։ Էլեքտրիֆիկացիայի դերը։ Գյուղատնտեսության զարգացման յերկու ճանապարհ,—սոցիալիստական և կապիտալիստական։ Լենինը կոոպերացիայի մասին, վորպես գյուղը դեպի սոցիալիզմ տանելու ճանապարհ։ Գյուղացիության չերտավորումը և Խորհրդային իշխանության քաղաքականությունը գյուղի տարբեր չերտերի նկատմամբ։ Շերտավորման յուրահատկությունը (15-րդ կուսկոնֆերենցիան այդ մասին։ 15-րդ համագումարը կուլակի վրա անարգել և արագընթաց հարձակման անցնելու մասին)։ Զքավորության ոգնության միջոցները—«չքավորական խմբերը»։ Փոխոգկոմների դերը։ Գյուղատնտեսության ինտենսիֆիկացիան և յերկրի ինդուստրալացման խնդիրները։ 15-րդ կուսկոնֆերենցիան և 15-րդ համագումարը գյուղատնտեսության խնդիրների մասին։

Գրականություն.—Վ. ՍՄՈՒՇԿՈՎ—«Խ.Ս.Հ.Մ. տընտեսական քաղաքականությունը», գլուխ 5-րդ։

Ընկ. Ռիկովի զեկուցումը 15-րդ կուսկոնֆերենցիայում և բանաձև զեկուցման առթիվ (1-ին և 4-րդ հատվածները)։

14-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումները կոոպերացիայի մասին։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 6. Առևտուրը և կոոպերացիան

Ապրանքաշրջանառության նշանակությունը յերկրի արտադրողական ուժերի զարգացման և սոցիալիզմի կառուցման գործում։ Պետական, կոոպերատիվ և մասնավոր առևտուր։ Ապրաքափոխանակության սիրապետելու կարողությունը, գների ճիշտ քաղաքականությունն իրագործելու համար։ Պետառևտրի և կոոպերացիայի զարգացումը, վորպես ճանապարհ սիրելու ապրանքաշրջանառությանը և հաջողություններն այդ ասպարիզում (ըստ ընկ. Ռիկովի զեկուցման 15-րդ կուսկոնֆերենցիայում և 15-րդ համագումարում)։ Պետարդյունաբերության զեկավար դերի իրագործումը գյուղացիական տնտեսության նկատմամբ պետառևտրի և կոոպերացիայի միջոցով։ Պետառևտրի և կոոպերացիայի հիմնական թերությունները (ավելցումներ պետական, կոոպերատիվ և մասնավոր առևտրի մեջ. վերադիր ծախքեր) և նրանց վերացման միջոցները։ Արտաքին առևտրի նշանակությունը սոցիալիստական շինարարության համար։ Ակտիվ բալանս։ Մեր խնդիրները ներքին, արտաքին առևտրի և կոոպերացիայի ասպարիզում, ըստ 14-րդ համագումարի, 15-րդ կուսկոնֆերենցիայի և 15-րդ համագումարի վորոշումների։

Գրականություն.—Վ. ՍՄՈՒՇԿՈՎ—«Խ.Ս.Հ.Մ. տընտեսական քաղաքականությունը», 7-րդ գլուխ։

15-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումները ընկ. Ռիկովի զեկուցման առթիվ (հատված 6. գների և ապրանքաշրջանառության պրոբլեման, արտաքին առևտուրը և կոոպերացիան։

15-րդ համագումարի վորոշումները պետական առևտրի և կոոպերացիայի մասին։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 7. Ֆինանսական քաղաքականություն

Կայուն դրամական շրջանառության նշանակու-

թյունը ապրանքաշրջանառության և գյուղացիական տնտեսության ապրանքայնացման համար։ Խորհրդային դրամանիշի անկման պատճառները։ Դրամական ռեֆորման և նրա նշանակությունը յերկրի տնտեսական վերելքի և բանվորա-գյուղացիական դաշինքի ամրացման համար։ Ապրանքային սովը և պայքար չերվոնեցի կայունության համար։ Վարկային եմիսիայի կարգավորումը։ Բանկային վարկի նշանակությունը։ Պետական փոխառությունը,—վորպես միջոց կուտակումները ժողովրդական տնտեսության վարկավորման համար ոգտագործելու։ Խնայողական դրամարկղներ։ Բնակչության խնայողության ոգտագործումը, վորպես մի աղբյուր յերկրի հետագա ինդուստրացման համար։ Պետական բյուջեյի եությունը և նշանակությունը։ Պետական և տեղական բյուջե։ Պետական բյուջեյի յեկամտային մասի կառուցումը համեմատած նախապատերազմյան բյուջեյի հետ։ Խորհրդային իշխանության հարկային քաղաքականությունը։ Նրա դասակարգային բնույթը։ Ուղղակի և անուղղակի հարկերի փոխհարաբերությունը։ Ֆինանսական քաղաքականության խնդիրները։

Գրականություն.—Վ. ՍՄՈՒՇԿՈՎ—«Խ.Ս.Հ.Մ. տնտեսական քաղաքականությունը», գլ. 6-րդ։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8. Տնտեսական քաղաքականության արդյունքները և հերթական խնդիրները

Սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարը Խ.Ս.Հ.Մ. տնտեսության մեջ։ Ժողովրդական տնտեսության համալնացման աստիճանը։ Ինդուստրացման դժվարությունները ու հաջողությունները։

Ժողովրդական տնտեսության զարգացման տեմպի մասնակի դժվարությունները, կապված նրա զարգացման վերակառուցման շրջանին անցնելու հետ։ Ծրագրայնության դերը մեր տնտեսության մեջ։

Բանվոր դասակարգի և գյուղացիության դրությունը։ Պրոլետարիատի նյութական ու կուլտուրական մակարդակի աճումը։ Գյուղացիության բարեկեցության աճումը։

Սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր յերկրում։ Սոցիալիստական շինարարությունը, Խ.Ս.Հ.Մ.—համաշխարհային կապիտալիստական տնտեսության ճեղքված քներ։ Ոպպոզիցիոն բլոկը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին և 15-րդ կուսկոնֆերենցիայի և Կոմինտերնի 7-րդ պլենումի վորոշումները։ 15-րդ համագումարի վորոշումներն այդ մասին։

Սոցիալիստական շինարարության հաջողությունները Խ.Ս.Հ.Մ-ում, վորպես «բոլոր յերկրների բանվորների և գաղութների ու կիսագաղութների ճնշված ժողովուրդների հեղափոխականացման ֆակտոր»։

Գրականություն.—Ընկ. ՌԻԿՈՎԻ զեկուցումը 15-րդ կուսկոնֆերենցիայում և բանաձև այդ զեկուցման առթիվ։

Բանաձև ընկ. Ստալինի զեկուցման առթիվ, ընդունված 15-րդ կուսկոնֆերենցիայում (հատված 1-ին)։

Ընկ. Ստալինի զեկուցումը Կոմինտերնի 7-րդ պլենումում և բանաձևն այդ զեկուցման առթիվ։

ԾՐԱԳԻՐ
ԼԵՆԻՆԻԶՄԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԸ

Հանձնարարություն 1.—*Լենինիզմի պատմական արմատները։*

Հանձնարարություն 2.—*Իմպերիալիզմի և կապիտալիզմի անկման լենինյան թեորիան։*

Հանձնարարություն 3.—*Մի երկրում սոցիալիզմի կառուցման մասին։*

Հանձնարարություն 4.—*Պրոլետարական հեղափոխության լենինյան թեորիան։*

Հանձնարարություն 5.—*Լենինիզմը և ագրարային հարցը։*

Հանձնարարություն 6.—*Պետության և պրոլետարական դիկտատուրայի մասին։*

Հանձնարարություն 7.—*Լենինի ուսմունքը անցողիկ շրջանի մասին, սոցիալիստական շինարարության ուղիներն ու ձևերը։*

Հանձնարարություն 8.—*Լենինիզմը և ազգային-գաղութային հարցը։*

Հանձնարարություն 9.—*Լենինիզմը և կազմակերպչական խնդիրը։*

Հանձնարարություն 10.—*Լենինը և ռազմական գործը։*

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 1.—Լենինիզմի պատմական արմատները

Իմպերիալիզմի եղոխայի և այդ շրջանի բանվորական շարժման կարճ բնութագրումը։ Մարքսիզմի հիմնական խնդիրների այլասերումը, Ցերկրորդ Ինտերնացիոնալի մեջ (ռեվիզիոնիզմ թեորիայում, ոպորտյունիզմ պրակտիկայում)։ Ոպորտյունիզմի սոցիալ-տնտեսական արմատները։ Լենինիզմը վորպես իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմ։ Լենինիզմի հիմնական խնդիրները։ Գլխավորը լենինիզմի մեջ։

Իմպերիալիզի դարաշրջանում հեղափոխության շարժման կենտրոնի՝ Արևմուտից Արևելք (Ռուսաստան) փոխադրվելու պատճառները։ Իմպերիալիզմի հիմնական հակասությունները և Ռուսաստանը վորպես այդ հակասությունների հանգույց։ Սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները Ռուսաստանում։ Հիմնական դասակարգերի դրությունը և դերը Ռուսաստանի հեղափոխական շարժումների մեջ։

Գրականություն. *Ստալին—Լենինիզմի հարցեր, «Լենինիզմի պատմական արմատները»—գլուխը։*

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2. Կապիտալիզմի անկման և իմպերիալիզմի Լենինյան թեորիան

Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի նորագույն ետապ։ Իմպերիալիզմի հիմնական հատկանշական կապերը ըստ Լենինի։ Իմպերիալիզմի զաղութա-

յին քաղաքականությունը և աշխարհի բաժանումը: Պատերազմների անուսափելիությունը: Իմպերիալիզը վորպես փթող կապիտալիզմ, վորպես պրոլետարական հեղափոխության նախաբյակը: Ոպպորտյունիստները իմպերիալիզմի մասին և ուլտրա-իմպերիալիզմի լենինյան քննադատությունը: Իմպերիալիստական պատերազմը և Յերկրորդ Ինտերնացիոնալի անկումը: Ժամանակակից պատմական շրջանի լենինյան բնորոշումը, վորպես իմպերիալիզի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանը: Իմպերիալիզմի՝ լենինյան թեորիայի կապը պրոլետարական հեղափոխության թեորիայի, բայլշեվիզմի դիրքի և տակտիկայի հետ պատերազմի տարիներին: Հոկտեմբերյան հեղափոխությունը, Արևմելքի ժողովուրդների ազգային ազատագրական շարժումը և Արևմուտքի պրոլետարիատի հեղափոխական պայքարը, վորպես սկիզբ կապիտալիզմի անկման և համաշխարհային հեղափոխության դարաշրջանի:

Գրականություն.— Լենին, «Իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի նորագույն ետապ»:
Ստալին.—Լենինիզմի հարցեր:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 3. Մի յերկրում սոցիալիզմի կառուցման մասին

«Տնտեսական և քաղաքական անհամաչափ զարգացումը» (Լենին) կապիտալիստական յերկրներում: Սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունները սկզբում մի քանի և նույնիսկ մի առանձին կապիտալիստական յերկրում: Մեր հեղափոխության փորձը և նեբքին հակասությունները հաղթահարելու հնարավորությունը

սոցիալիզմ կառուցելու համար: Հեղափոխության «ներքին ուժերի» և բուրժուազիայի զինված միջամտության (ինտերվենցիայից) «յերաշխիք» ունենալու հարցերը: Մի յերկրում սոցիալիզմի վերջնական հաղթանակի հարցը:

Տրոցկիզմը և Լենինիզմը մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունների մասին: Ոպոզիցիան 14-րդ համագումարում, 15-րդ կուսկոնֆերենցիայում, Կոմինտերնի Գործկոմի պլենումում: 14-րդ և 15-րդ համագումարները ու 15-րդ կուսկոնֆերենցիան մեր յերկրում սոցիալիզմի կառուցման մասին:

Գրականություն.—1. 14-րդ կուսկոնֆերենցիայի բանաձևը Կոմինտերնի և ՌԿԿ խնդիրների մասին արված զեկուցման տեքստով (9-րդ թեզից):
2. 14-րդ գումհամագումարի բանաձևը կենտկոմի հաշվեսվության տեքստով (ներքին դրության մասում):
3. Ընկեր Ստալինի 15-րդ կուսկոնֆերենցիայում արած զեկուցման 2-րդ հատվածը:
4. Ստալին, «Լենինիզմի հարցեր», գլուխ «Մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին»:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 4. Պրոլետարական հեղափոխության Լենինյան թեորիան

1905 թվի հեղափոխությունը և Լենինի ուսմունքը բուրժուական-դեմոկրատական հեղափոխության շարժիչ ուժերի, ու պրոլետարիատի հեգեմոն դերի մասին: Սոցիալ-դեմոկրատների յերկու տակտիկան բուրժուական դեմոկրատական հեղափոխության

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ Ա. ՍԻՄՈՆԻԿՅԱՆԻ Անվան Պետական Գրադարան

հարցում Յերկրորդ Ինտերնացիոնալի մեջ: Բուրժուական դեմոկրատիայի միջոցով սոցիալիզմ ստեղծելու ոպպորտյունիստական թեորիան:

Պրոլետարիատի դիկտատուրան, վորպես պրոլետարական հեղափոխության գենք: Պրոլետարիատի դիկտատուրան, վորպես պրոլետարիատի տիրապետությունը բուրժուազիայի վրա: Խորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ձեվ: Բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ (պրոլետարիատի դեկավարող դերի ապահովությամբ), վորպես Խորհրդային իշխանության սոցիալական հիմքը: Լենինը բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին: Ոպպոզիցիայի սխալները այդ հարցում 1925–26 թվին այնպես, ինչպես նաև մեր պետության բնույթի մասին: Խորհրդային իշխանության հերթական խնդիրները,—պետապարատի բարելավումը, խորհուրդների աշխուժացումը, հեղափոխական օրինականությունը:

Գրականություն. Ստալին.—«Լենինիզմի հարցեր»—պրոլետարական հեղափոխությունը և պրոլետարիատի դիկտատուրան», «Կուսակցությունը և բանվոր դասակարգը պրոլետարական դիկտատուրայի սիստեմի մեջ»:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 7.—Լենինի ուսմունքը անցողիկ շրջանի, սոցիալիստական շինարարության ձևերի և ուղիների մասին

Լենինը սոցիալիզմի հաղթանակի մասին մի յերկրում: Ինչ է նշանակում յերաչխիք ունենալ դերծ մնալու վերածնունդից կամ վերջնական հաղթանակ:

«Ոպպոզիցիոն բլոկի» սխալները այդ խնդրում: Լենինը անցողիկ շրջանի եկանոմիկայի, քաղաքականության և շարժիչ ուժերի մասին: Լենինը սոցիալիստական շինարարության ուղիների և ձևերի մասին (կոոպերացիա, կոնցեսիաներ, վարձակալություն): Համ. ԿԿ (բ) 14–րդ համագումարի, Կենտկոմի ապրիլյան պլենումի, 15–րդ կուսկոնֆերենցիայի և 15–րդ համագումարի վորոշումները ինդուստրիալիզացիայի մասին: Ինդուստրալիզացիա, խնայողության ռեժիմ և սոցիալիստական կուտակում: Նոր ոպպոզիցիոն բլոկի «գերինդուստրալացումը» և 15–րդ կուսկոնֆերենցիան և 15–րդ համագումարը ինդուստրալացման ուղիների և միջոցների մասին:

Գրականություն.—1. Ստալին. «Լենինիզմի հարցեր», «Պայքար սոցիալիստական շինարարության հաղթանակի համար» գլուխը:
2. 15–րդ կուսկոնֆերենցիայի բանաձևերը «կոոպերացիայի մասին» դեկուցման առթիվ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8.—Լենինիզմ և ազգային–գաղութային հարցը

Յերկրորդ Ինտերնացիոնալի կուսակցությունների ոպպորտյունիզմը ազգային–գաղութային հարցում և նրա արմատները: Ոգնություն հայրենական և միջազգային կապիտալիզմին գաղութային և ազգային քաղաքականության մեջ:

Ազգային–գաղութային հարցի ընդհանուր գրումը լենինիզմի մեջ. 1. Ազգային–գաղութային հարցը, վորպես պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասը, 2. Ազգային–գաղութային հարցը,

Վորպես լենինիզմի հիմնական հարցի յենթական, 3. Ազգային-գաղութային հարցը, հիմնականում վորպես գյուղացիական հարց:

Ազգային հարցը Համկկ (բ) ծրագրի մեջ: Լենինի պայքարը ոպպորտյունիզմի դեմ ազգային—գաղութային հարցում:

Ազգային հարցի լուծումը ԽՍՀՄ մեջ: ԽՍՀ Միության կազմումը: Բայլշեվիզմի ազգային քաղաքականության միջազգային նշանակությունը: ԽՍՀՄ և Արևելքի ժողովուրդների ազգային ազատագրական շարժումը:

Գրականություն. Ստալին.—«Լենինիզմի հարցեր», Ազգային խնդիրը:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9.—Լենինիզմը և կազմակերպչական հարցը

Լենինի ուսմունքը կուսակցության մասին. ա) կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի ավանգարդ, բ) կուսակցությունը վորպես պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը, գ) կուսակցությունը, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի գործիք, դ) կուսակցությունը և առաջնորդները, յե) կուսակցությունը և կուս. ապպարատը, զ) կուսակցությունը, պրոֆմիությունները, խորհուրդները և կոմյերիմիությունը: Բայլշեվիզմի կազմակերպչական հիմքերը, միաձուլություն, դեմոկրատական կենտրոնացում, կարգապահություն, սոցիալական կազմի կարգավորումը:

Բայլշեվիզմի կազմակերպչական քաղաքականության հիմնական փուլերը և Լենինի պայքարը ոպպորտյունիզմի դեմ կազմակերպչական խնդիրներում (կուսակցության 2-րդ համագումարը, առհեղափոխության շրջան,—պայքար «ձախ» կոմունիզմի, «դեմոկրատական կենտրոնացման» խմբակի, «բանվորական ոպոզիցիայի» և տրոցկիզմի դեմ):

14-րդ համագումարը, հուլիսյան պլենումը, 15-րդ կուսկոնֆերենցիան, ոգոստոսյան միացյալ պլենումը և 15-րդ համագումարը Համ Կկ-ի մեջ առաջացած «ոպոզիցիոն նոր բլոկի» մասին: Կուսակցության կողմից «ոպոզիցիոն նոր» բլոկի կազմակերպչական հայացքների, ֆրակցիոն պրակտիկայի, և նոր կուսակցություն ստեղծելու փորձի դատապարտումը: Կոմինտերնը և կազմակերպչական հարցը:

Գրականություն. Ստալին.—«Լենինիզմի հարցեր» կուսակցությունը:

Սորին.—Լենինի ուսմունքը կուսակցության մասին գլ. 8 և 9-րդ:

14-րդ համագումարի բանաձևերը Կենտկոմի հաշվեսվության առթիվ (համապատասխան տեղը):

15-րդ կուսկոնֆերենցիայի բանաձևերը ընկ. Ստալինի զեկուցման առթիվ, հատվ. 2-րդ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 10.—Լենինը և ռազմական գործը

Յերկրորդ Ինտերնացիոնալի կուսակցությունների և ռուս մենշեվիկների վերաբերմունքը դեպի զինված ապստամբությունը: Ոպորտյունիստների կողմից Մարքսի հայացքների վերաքննումը այդ խնդրում, կապված մարքսիստական թեորիայի և պրակտիկայի

վերաքննման հետ, հրաժարվելով հեղափոխություն պատրաստելուց։

Լենինը զինված ապստամբության և ռազմական գործի մասին, կապված 1905—1917 թվերի հեղափոխությունների փորձի հետ։

Լենինը պատվարային (բարրիկադային) մարտի տակտիկայի և պարտիզանական կռիվների մասին։

Զինված ապստամբության և ռազմական աշխատանքի հարցերը Հոկտեմբերի նախապատրաստման և Հոկտեմբերյան հեղափոխության շրջանում։ Լենինը և Կարմիր գվարդիան։

Լենինիզմի ստրատեգիան ու տակտիկան և ռազմական ստրատեգիան ու տակտիկան։ Լենինի պատգամները և յերկրային շինարարությունը։

Գրականություն։—Ստալին «Լենինիզմի հարցեր»—ստրատեգիա և տակտիկա։

Ֆրունզե—«Լենինը և Կարմիր բանակը»։

Տալ. Բ.—ՀամԿԿ և Կարմիր բանակը»։

«Բաղաշխատակցի ուղեկից» №№ 8—9 առ 1 փետրվարի 25 թ. № 13 առ 1 ապրիլի 25 թ. № 15 1 մայիսի 1925 թ.

ԾՐԱԳԻՐ

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՅԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԸ

1. Արդյունաբերական հեղաշրջումը Անգլիայում.
2. Ֆրանսիական Մեծ Հեղափոխությունը.
3. Բանվոր դասակարգը և հեղափոխական շարժումը Արևմտյան Յեվրոպայում 14-րդ դարու յերկրորդ կեսում.
4. Առաջին Ինտերնացիոնալի եպոխան.
5. Յերկրորդ Ինտերնացիոնալի եպոխան.
6. Գյուղացիական բարենորոգումները 1861 թ. և կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում 18-րդ դարու յերկրորդ կեսում։
7. Բանվորական շարժումը Ռուսաստանում 19-րդ դարու վերջին և 20-րդ դարու սկզբին ու Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության առաջացումը.
8. 1905 թվի հեղափոխությունը.
9. Ռեակցիայի և բանվորական շարժման նոր վերելքի եպոխան.
10. Համաշխարհային պատերազմը և Յերկրորդ Ինտերնացիոնալի անկումը.
11. 1917 թվի հեղափոխությունը.

12. Խորհրդային իշխանության հաստատումը Ռուսաստանում և քաղաքացիական պատերազմը։

13. Կոմինտերն։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 1.—Արդյունաբերական հեղաշրջումը Անգլիայում

17—18-րդ դարերը, վորպես առևտրական կապիտալիզմի ծաղկման շրջան։ Անգլիան վորպես առևտրական առաջավոր պետություն։ Գաղութների շահագործումը։

Գյուղատնտեսության դրությունը Անգլիայում 18-րդ դարու սկզբում։ Գյուղացիական հողատիրության համայնական բնույթը։

Արդյունաբերության դրությունը 18-րդ դարու սկզբում (նրա տնայնագործական-արհեստավորական բնույթը, արդյունաբերության տնային սիստեման)։

Մանվածային մեքենաների, մեխանիքական-գործվածքային մեքենայի և շոգեմեքենայի գյուտը։ Խոշոր ֆաբրիկաների առաջացումը։

Քաղաքների աճումը։ Գյուղացիության պրոլետարիզացիան։ Մանր արտադրության անկումը։ Մանր բուրժուազիայի պրոլետարիզացիան։ Բանվորի դրությունը գործարաններում։ Բանվորների և արհեստավորների վերաբերմունքը հանդեպ տեխնիկայի նվաճումների։ Խոշոր արդյունաբերության զարգացումը։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2.—Ֆրանսիական Մեծ Հեղափոխությունը

Ֆրանսիայի տնտեսական կառուցվածքը 18-րդ դարու յերկրորդ կեսում։

Հակասություններ նախապատերազմյան Ֆրանսիայի տնտեսական զարգացման հասունացած պահանջների և պետական կազմակերպության միջև։

Դասակարգային հակասությունները Ֆրանսիայում 1789 թվի նախորյակին։ Բուրժուազիան վորպես յերրորդ դասի հեգեմոնը նախ քան հեղափոխությունը։ Ազատություն և հավասարությունը վորպես հեղափոխական բուրժուազիայի հիմնական լոզունգներ ու նրանց դասակարգային իմաստը։

Տնտեսական վերելքը Ֆրանսիայում 18-րդ դարու յերկրորդ կեսում և անբավականության աճումը հին կարգերի դեմ։ 1788 թվի անբերբերությունը և սոված բունտեր։ 1789 թ. հուլիսի 14-ի Պարիզյան ապստամբությունը։ Գյուղացիական ապստամբությունը և «հին ռեժիմի» լիկվիդացիան գյուղում։ Գյուղացիական շարժման նշանակությունը հեղափոխության հետագա զարգացման համար։

Ցենզային բուրժուազիան, վորպես վճռական ուժ Սահմանադրական ժողովում։ «Քաղաքացու և մարդու իրավունքի դեկլարացիան» և 1791 թվի սահմանադրությունը։

Պատերազմը Ավստրիայի և Պրուսիայի հետ։ Ֆրանսիական բանակի կազմալուծումը։ Ոգոստոսի 10-ի հեղաշրջումը։ Կենտրոնական կոնվենտի գումարումը։

Ֆրանսիայում բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը տանելու բուրժուական կուսակցությունների անընդունակությունը։ 1793 թվի մայիսի 31-ի և հունիս 2-ի ապստամբությունները։

Մանր բուրժուազիայի դիկտատուրան։ Պայքար ներքին հակահեղափոխության դեմ։ Ահարեկման (տեր-

բորի) սիստեմը։ Հեղափոխական պրոպագանդան բանակում։ Հաջողությունները ճակատում։

Ֆրանսիայի հանրապետության ներքին և արտաքին դրության բարելավումը 1794 թվին։ Տերմիդորյան հեղաշրջում։ Բուրժուական ռեակցիա։

Ֆրանսիական Մեծ հեղափոխության արդյունքները։ Ֆրանսիական հեղափոխության տարածիչների ազդեցությունը 19-րդ դարու հեղափոխական շարժման վրա։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 3.—Բանվոր դասակարգը և հեղափոխական շարժումը Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարու առաջին կեսում

Կապիտալիզմի զարգացումը Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարու առաջին կեսում։ Տնտեսական և սոցիալական հակասությունների աճումը։ Արդյունաբերական ճգնաժամեր։

Բանվոր դասակարգի դրությունը Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարու առաջին կեսում։ Առաջին ընդհարումները կապիտալիստների հետ։ Պայքար մեքենայի դեմ։

Անգլիական պրոլետարիատ և լերևսուն-քառասունական թվականների ճգնաժամերը։ Չարտիզմ։ Անգլիական պրոլետարիատի խայտաբղետ կազմը չարտիզմի ժամանակաշրջանում և չարտիստական կազմակերպության վոչ ամուր լինելը։ Չարտիզմի անկումը։

Հուլիսյան միահեծանությունը Ֆրանսիայում։ 1848 թվի փետրվարյան հեղափոխությունը։ Դասակարգային հակասությունները հեղափոխության հաջորդ որը։ Հակահեղափոխական արամադրությունների աճումը

բուրժուազիայի մեջ։ Զինված ուժերի պատրաստումը պրոլետարիատի տապալման համար։ Ինչու բուրժուազիան կարողացավ ոգտագործել դյուղացիությանը, վորպես հակահեղափոխական ուժ։ Հուլիսյան որերը։ Պրոլետարիատի հեղափոխական շարժման ազատագրումը բուրժուազիայի հեգեմոնիայից, վորպես 1848 թվի հեղափոխության կարևորագույն արդյունքը Ֆրանսիայում։

1848 թվի հեղափոխությունը Գերմանիայում և Ավստրիայում։ Հակասությունները բուրժուազիայի և պրոլետարիատի միջև։ Լիբերալ բուրժուազիայի նահանջը և նրա դաշինքը միահեծանության հետ։ Զիջումներ գյուղացիությանը։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 4.—Առաջին Ինտերնացիոնալի եպոխան

Բանվոր դասակարգի շարժման ընդհանուր բնույթագիրը 50—60-ական թվականներին Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում։

Միջազգային բանվորական կազմակերպություն ստեղծելու առաջին փորձերը։ Կոմունիստների միությունը։ «Կոմունիստական Մանիֆեստ»։ Գլատական սոցիալիզմի հիմնական դրությունները։ Ինտերնացիոնալ դատապարտելի տարածումը բանվորների մեջ 50 և 60-ական թվականների սկզբներին։ Միջազգային ըստրեկրբեբերության դեմ պայքարելու համար միջազգային կազմակերպության անհրաժեշտությունը, ամենուրեք բանվորական օրվա կրճատման, կազմակերպված, համաձայնեցրված քաղաքական յելույթների համար։

Մարտին-Հալլեյի միտինգը 1864 թ. սեպտեմբերի 28-ին, վորոշում բանվորների միջազգային ընկերություն կազմակերպելու մասին: Մարքսի մասնակցությունը I ինտերնացիոնալի կազմակերպման գործին, 1886 թվի արդյունաբերական ճգնաժամը և բանվորական շարժման կենտրոնացումը: Ինտերնացիոնալի ժողովրդականացումը բանվորական մասսաների մեջ: Նրա արագ աճումը 60-ական թվականների յերկրորդ կեսին:

1-ին Ինտերնացիոնալի կառուցվածքը: Նրա սկզբնական բջիջների թուլությունը և խայտաբղետությունը:

Ներքին պայքարը Ինտերնացիոնալի մեջ: Մարքսիզմ և Պրուդոնիզմ: Մարքսիզմի պայքարը Բակունիզմի հետ:

Պարիզյան Կոմունայի պարտությունը և այդ պարտության ազդեցությունը Ինտերնացիոնալի վրա: Ներքին պայքարի սրումն: 1-ին Ինտերնացիոնալի քայքայումը:

Պարիզյան Կոմունայի պատմական նշանակությունը: Կոմունայի փորձի գնահատությունը Մարքսի և Լենինի մոտ: Պարիզյան Կոմունայի դասերը և պրոլետարիատի դիկտատուրան Խ. Ս. Հ. Մ.-ում

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 5.—2-րդ Ինտերնացիոնալի եպոխան

Յեվրոպայի և Ամերիկայի տնտեսական աճումը 19-րդ դարու վերջին տասնամյակներում և 20-րդ դարու առաջին տասնամյակներում: Կապիտալիզմի մուտքը դաղութները: Ինչ է իմպերիալիզմը:

Բանվորական շարժման ձևավորումն ու քանակական աճումը 19-րդ դարու վերջերին և 20-րդ դարու սկզբներին: Բանվորական շարժման հիմնական ձևերը այդ շրջանում: Պրոֆշարժումը, կոոպերացիան, քաղաքական կուսակցությունները: Պարլամենտարիզմ և բանվորական շարժումը:

Ռեֆորմիզմը բանվորական շարժման մեջ: Ռեֆորմիզմի սոցիալական արմատները: Պրոֆեսիոնալ և կուսակցական ապարատների աճումը և բանվորական բյուրոկրատիայի առաջացումը:

Հեղափոխական մարքսիզմի վերաքննումը և փորձեր ռեֆորմիզմը տեսականորեն հիմնավորելու համար:

Պարիզյան կոնգրեսը և 2-րդ Ինտերնացիոնալի առաջացումը: Յերկրորդ Ինտերնացիոնալը վորպես ազգային բանվորական կուսակցությունների ֆեդերացիա: Միջազգային դեսցիպլինայի թուլությունը 2-րդ Ինտերնացիոնալում: 2-րդ Ինտերնացիոնալի դրական դերը:

Ներքին պայքարը 2-րդ Ինտերնացիոնալում: Ռեֆորմիստները, կենտրոնը և ձախերը:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 6.—1861 թ. գյուղացիական բարենորոգումը և կապիտալի զարգացումը Ռուսաստանում 19-րդ դարու յերկրորդ կեսերին

Կապիտալիզմի զարգացումը 19-րդ դարու առաջին կեսերին և ճորտատիրական օրենքը:

1861 թվի գյուղացիական բարենորոգումը:

Գյուղատնտեսությունը բարենորոգումից հետո: Հետգնման վճար և հարկադրման ծանրությունը: Կալվածատիրական հողերի վարձակալությունը: Ճորտա-

յին շարժումներ։ Սոցիալ-հեղափոխականների կուսակցություն։

«Իսկրայի» հաջողությունները։ Պայքար՝ համագումար հրավիրելու համար։ Ռ. Ս. Դ. Բ. կուսակցության 2-րդ համագումարը։ Բայշևիզմ և մենշևիզմ։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 8.—1905 թվի հեղափոխությունը

Դասակարգային հակասությունները Ռուսաստանում 1905 թ. նախորյակին։ Կալվածատերերը և դյուղացիությունը։ Ճորտատիրական հարաբերությունների մնացորդները գյուղում։ Ռուսական բուրժուազիայի դեպի ինքնավարություն ունեցած վերաբերմունքի յերկվությունը։ Պրոլետարիատը վորպես հեղափոխական վորոշիչ ուժ։ Պրոլետարիատի հեգեմոնիայի անխուսափելիությունը հեղափոխության մեջ։

Ռուս-Յապոնական պատերազմը։ Լիբերալ շարժումը։

Ինքնավարության փորձերը բանվորական շարժումն իր ձեռքը վերցնելու ուղղությամբ։ Գապոնովշչինա։ Հունվարի 9-ը։ Հունվարի 9-ի դեպքերի նշանակությունը։ Նրա արձագանքները մայրաքաղաքներում և ծայրամասերում։

Ռ. Ս. Դ. Բ. կուսակցության (բ) յերրորդ համագումարը Ժնևում։ Մենշևիկների տակտիկան։ Գյուղացիության դերի խնդիրը հեղափոխության մեջ, զինված ապստամբության և հեղափոխական կառավարության մեջ մասնակցելու մասին։ Բայշևիկները կողմնակից եյին պրոլետարիատի հեղափոխական հեգեմոնիային հեղափոխության մեջ, պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի և զինված ապստամբության լոզունգի տակ։ Տրոցկու դիրքը այդ խնդրում։

Մասսայական շարժման ընդարձակումը 1905 թ. ամառը։

Իվանո-Վոզնեսենսկի գործադուլը։ Ապստամբությունը «Պոտյոմկին» զրահանավի վրա։

1905 թվի աշունը։ Հոկտեմբերյան գործադուլը։ Բուրժուական ինտելիգենցիայի մասնակցությունը շարժումներին։ Ինքնավարության նահանջը։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։

Բանվորական Պատգամավորների Խորհուրդ։ Պետերբուրգի խորհրդի գործունեությունը։ Բանվորական շարժման նոր լոզունգներ։ Շարժումը բանակում։ Գյուղացիական շարժումներ։ Բուրժուազիան դաշինք և կնքում ինքնավարության հետ։ Պրոլետարիատը և գյուղացիությունը վորպես հեղափոխական դասակարգեր 1905 թ. վերջերին։

Պրոլետարական զինված ուժեր ստեղծելու փորձեր։ Բանվորական մարտական խմբակները, վորպես Կարմիր Բանակի կորիզը։

Դեկտեմբերյան զինված ապստամբությունը։ Ապստամբության պարտությունը (պատժող զորամասեր)։ Ռեակցիայի սկիզբը։

1905 թ. հեղափոխության պարտության պատճառները։ 1905 թվի հեղափոխության նշանակությունը Ռուսաստանի հեղափոխական շարժման զարգացման համար։ 1905 թվը, վորպես Հոկտեմբերյան հեղափոխության պատմական «բեպետիցիա»։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9.—Ռեակցիայի և բանվորական շարժման նոր վերելքի շրջանը: Ցարական Ռուսաստանի «Ռազմա-ֆեոդալական» իմպերիալիզմը

1906—11 թվերի ռեակցիան: Հալածանքներ հեղափոխական շարժման դեմ: Գյուղացիական շարժումների ճնշումը: 1-ին և 2-րդ Պետական Դումաներ:

1907 թվի հունիս 3-ի «հեղաշրջումը»: 3-րդ Պետական Դուման:

Ցարիզմի դաշինքը ցենզային բուրժուազիայի հետ: Ինքնավարության ռեալ դիրքերը զարգացող կապիտալիզմին: Ստոլիպինշչինա: Ստոլիպինի ագրարային բարենորոգումները, վորպես փորձ, ստեղծելու կազակային հենարան գյուղում:

Հեղափոխական շարժման վայրկեջը: Ռուս. Սոց. Դեմոկր. Բանվոր. կուսակցության 5-րդ համագումարը: Կուսակցության կազմակերպչական փլուզում ռեակցիայի շրջանում: Ֆրակցիոն պայքար: Հետևանչողականներ և լիկվիդատորները: Լենինի վերաբերմունքը լեգալ հնարավորություններն ոգտագործելու, պահպանելու և գաղտնի կազմակերպությունը պահելու մասին: Ոգոստոսյան բլոկը և Տրոցկու դիրքը հեղափոխության շրջանում:

Հեղափոխության շարժման նոր վերելք: Լենայի դեպքերը: «Պրավդա»-ի գործունեությունը և հաջողությունները: Կուսակցական կյանքի կենդանություն: Բայշևիկական կազմակերպության քանակային աճումը: Գործադուլները համաշխարհային պատերազմի նախորյակին:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Ռուսաստանում համաշխարհ. պատերազմի նախորյակին: Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Ագրարային խնդրի անլուծելիությունը Ստոլիպինյան բարենորոգումով: Գյուղի չերտավորումը և ազքատացումը:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 10.—Համաշխարհային պատերազմը և 2-րդ Ինտերնացիոնալի անկումը

Իմպերիալիզմը և համաշխարհային մրցությունը: Պայքար գաղութների և գաղութային յերկրներին տիրանալու համար: Գերմանիայի տնտեսական աճումը: Անգլո-գերմանական մրցակցությունը: Կապիտալիստական պետությունների իմպերիալիստական խմբավորումները: Ցերբորդական համաձայնությունը և յերբորդական դաշինքը: 1914-1918 թվերի համաշխարհային պատերազմը:

Պատերազմի հարցը 2-րդ Ինտերնացիոնալում: Սոցիալ-շովինիզմը, վորպես ոպորտունիզմի տրամաբանական յեզրակացություն: Շտուտգարտի և Բազելի կոնգրեսները: Վ. Ի. Լենինի և Ռ. Լյուքսեմբուրգի բռնած դիրքը:

Պատերազմի հայտարարումը և II Ինտերնացիոնալը: Շովինիստական թունավորում... II Ինտերնացիոնալի կուսակցությունների մեջ: Կոչ բանվորներին «հայրենիքի» պաշտպանության համար: Սոցիալիստների մասնակցությունը իմպերիալիստական կառավարություններին: II Ինտերնացիոնալի անկումը:

Հեղափոխական մարքսիզմը և համաշխարհային պատերազմը: Լենինի լոզունգը իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին:

«Պարավոզականների» փոքրամասնությունը միջազգային բանվորական շարժման մեջ։ Ցիմերվալդի և Կվինտալի կոնֆերենցիաները որպես նոր Ինտերնացիոնալ, նոր պլատֆորմայով հիմնելու փորձեր։ Կենտրոնականների (ՈՒՅԻՐՈՎ) խաղաղասիրությունը և նրանց բռնած կիսավորոշ դիրքը։ «Ցիմերվալդյան ձախերը» որպես Կոմինտերնի նախորդներ։ Տրոցկու լոզունգը Եվրոպայի Միացյալ Նահանգների մասին և այդ լոզունգի քննադատությունը Լենինի կողմից։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 11.—1917 թվի Հեղափոխությունը

Ռուսաստանի մասնակցությունը համաշխարհային պատերազմին։ Ռուսական բանակի պարտությունը 1905 թվին։ Ներքին դժվարությունները։ Թանկությունը, պարենավորման ճգնաժամ, փոխադրության միջոցների քայքայումը։ Ցարիզմի քաղաքական կոնֆլիկտը բուրժուազիայի հետ։ Ռասպուտինյան Պետական Դումայում։

Սոցիալ-շովինիզմը պատերազմի ժամանակ։ Պլեխանովի դիրքը։ Բայլշևիզմի հեղափոխական ինտերնացիոնալիզմը։ 4-րդ Դումայի բայլշևիկյան ֆրակցիայի դործը։ Բանվորների ռազմարդյունաբերական կոմիտեներին մասնակցելու հարցը։ Մենշևիկների և բայլշևիկների վերաբերմունքը հանդեպ այդ խնդրի։

Պարենավորման ճգնաժամի սրումը։ Փետրվարյան հեղափոխությունը։ Ինքնակալության տապալումը։ Ժամանակավոր կառավարություն։ Խորհուրդների առաջացումը։ Ցերկիչխանություն։ Պատերազմը շարունակելու հարցը։

Լենինի վերադարձը Ռուսաստան։ Ռ. Սոց.-Դեմոկր. Բանվորական կուսակցություն (բայլշևիկների) Ապրիլյան կոնֆերենցիան։ Ընկեր Կամենևի դիրքը։

Քաղաքական կուսակցությունները 1917 թվին։ Կոալիցիոն կառավարություն։ Ապրարային շարժումները։ Բայլշևիկական ագիտացիայի հաջողությունները բանակում։ Հուլիսյան հարձակումը։ Հուլիսի 3—5-ը։ Պատերազմը շարունակելու հարցը։ Ժամանակավոր կառավարության պայքարը բայլշևիկների դեմ։

Ռ. Սոց.-Դեմ. Բանվոր. կուսակցության (բ) 6-րդ համագումարը։ Կորնիլովշչինան։ Բայլշևիկների պայքարը խորհուրդներն իրենց ձեռքն առնելու համար։ Ժամանակավոր կառավարության հոգեվարքը։ Զինված ապստամբության պատրաստություններ։ Կարմիր դվարդիայի առաջացումը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Կերենսկու Պետրոգրադի վրա հարձակման լիկվիդացիան։ Զինված ապստամբությունը Մոսկվայում։ Պայքար ծայրամասերում խորհրդային իշխանություն հաստատելու համար։ Զինովյևի և Կամենևի դիրքը Հոկտեմբերին։

Խորհուրդների Համառուսական 2-րդ համագումարը։ Դեկրետներ խաղաղության և հողի մասին։ Ընտրություններ Սահմանադրական ժողովին։ Խորհուրդների 3-րդ համագումարը և Սահմանադիր ժողովի արձակումը։

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 12.—Խորհրդային իշխանության հաստատումը Ռուսաստանում և քաղաքացիական պատերազմը

Խորհրդային Ռուսաստանի միջազգային դրու-

կայունացումը։ Եվրոպայի տնտեսական անկումը և Ամերիկայի ուժեղացումը։

Կապիտալիզմի ծնունդը պատերազմի ժամանակ գաղութային և կիսագաղութային երկրներում։ Ազգային-հեղափոխական շարժման կենդանացումը գաղութներում։ Պատերազմը Մարոկոյում և Սիրիայում։ Հեղափոխական շարժումը Չինաստանում։ Նոր դժվարություններ եվրոպական կապիտալիզմի համար։

Բանվորական շարժումը կապիտալիզմի մասնակի կայունացման շրջանում։ Պրոֆշարժման համաշխարհային միասնականության հարցը։ Դեպի ձախ անդրիական բանվորական շարժման ձախացման խթանները։ Ընդհանուր և ածխահանների գործադուլը 1926 թվին Անգլիայում։ Ոպպոզիցիոն բլոկի հայացքները կապիտալիզմի կայունացման մասին։ Միասնական ճակատի տակտիկայի նյութությունը։ Անգլո-ռուսական կոմիտեն և ոպպոզիցիոն բլոկը Համ ԿԿ (բ)-ի մեջ։ Աջ և ուլտրա-ձախ թեքումները Կոմինտերնի մեջ։ Պայքար Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի կոմունիստական կուսակցությունների բայլշեվիկացման և մասսաների նվաճման համար։ Բանվորական պատգամավորությունները դեպի ԽՍՀՄ։ Կոմինտերնի վերաբերմունքը հանդեպ գաղութային-ազատագրական շարժումների։ Կոմինտերնի ժամանակակից խնդիրները։ Կոմինտերնի Գործկոմի ընդլայնած 7-րդ պլենումի հիմնական վորոշումները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ։

Մոնոսով—Հեղափոխական շարժումների պատմություն։

Պոկրովսկի—Ռուսաց պատմությունը ամենամվոր ձևով և դրվագներ Ռուսաստանի 19-րդ և 20-րդ դարու հեղափոխական շարժումների պատմության մասին։

Պապով—Համ ԿԿ (բ) պատմությունը։

Յելնիցկի—Բանվորական շարժման պատմություն Ռուսաստանում։ I և II մաս։

Խ. Ս. Հ. Մ. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ

1։ Լեհաստան—4 ժամ

Լեհական պետության առաջացումը։ Տերիտորիա, բնակչությունը և Լեհաստանի սահմանները։ Քաղաքական կառուցվածքը։ Քաղաքական կուսակցությունները։ Լեհաստանի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը։ Ֆինանսական դրությունը։ Պետական պարտքերը։ Լեհաստանի ռազմական ծախքերը և զինված ուժերը։ Աշխատավորության դրությունը։ Հեղափոխական շարժումը և ազգային հարցը (Դասակարգային և ազգային հակասությունները Լեհաստանում)։

«Պիլսուդչինայի» նյութությունը և պատճառները։ Լեհաստանի կախումն արևմտա-եվրոպական պետություններից (Անգլիա և Ֆրանսիա)։ Լեհաստանը և Գերմանիան։ Լեհաստանի դերը ԽՍՀ Միության դեմ իմպերիալիստական բլոկ ստեղծելու մեջ։ Լեհաստանը վորպես իմպերիալիզմի զինված առաջավոր պոստ ԽՍՀ Միության դեմ։

2։ Ռումինիա—4 ժամ

Ռումինիան պատերազմից հետո։ Տերիտորիան,

բնակչությունը և ազգային կազմը: Բեսարաբիայի գավթումը: Ռումինիայի քաղաքական կառուցվածքը: Քաղաքական կուսակցությունները:

Արդյունաբերության ու գյուղատնտեսության դրությունը: Ֆինանսական դրությունը:

Աշխատավորության իրավազուրկ դրությունը: Գյուղացիական շարժումը և սպիտակ տերրորը: Ազգային հարցը:

Ռումինիան խոշոր իմպերիալիստական գործիչների հլու ծառան և վորպես իմպերիալիզմի առաջավոր պոստ ԽՍՀ Միության դեմ հարձակվելու համար: Ռումինիայի զինված ուժերը: Ռումինիայի և Լեհաստանի ռազմական դաշինքը ԽՍՀ Միության դեմ:

3. Լիտվա—2 ժամ

Ժամանակակից Լիտվայի առաջացումը: Քաղաքական կառուցվածքը, տերիտորիան, բնակչությունը:

Լիտվայի գյուղատնտեսությունը: Աշխատավորության դրությունը: Հեղափոխական շարժումը: Լիտվայի փոխ-հարաբերությունը Լեհաստանի հետ,—Վիլնոյի հարցը: Ցերաշխավորական պայմանագրի հաստատումը ԽՍՀՄ և Լիտվայի միջև: Դեկտեմբերյան հեղաշրջում: Ֆաշիստական հեղաշրջումը Լիտվայում և սպիտակ տերրոր:

4. Լատվիա—2 ժամ

Ժամանակակից Լատվիայի առաջացումը: Լատվիայի քաղաքական կառուցվածքը, բնակչությունը և տերիտորիան:

Լատվիայի գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը: Աշխատավորության դրությունը: Հեղափոխական շարժումը: Լատվիայի ռազմական ուժերը: Լատվիան Անտանտայի ձեռքին վորպես գործիք ԽՍՀՄ դեմ: Լատվիայի բանակցությունները ԽՍՀՄ հետ յերաշխավորական պայմանագիր կնքելու մասին:

5. Եստոնիա—2 ժամ

Եստոնիայի առաջացումը: Քաղաքական կառուցվածքը, բնակչությունը: Գյուղատնտեսության դրությունը: Աշխատավորության դրությունը: Սպիտակ տերրորը Եստոնիայում: Տերրորի ուժեղացումը Եստոնական ապստամբությունից հետո: Եստոնիայի ծառայությունը Անտանտային ընդդեմ ԽՍՀՄ-ն (Յուդենիչ): Եստոնական բանակը:

6. Ֆինլանդիա—4 ժամ

Ֆինլանդիան ցարական Ռուսաստանի կազմի մեջ: Ժամանակակից Ֆինլանդիայի առաջացումը: Ֆինլանդիայի եկոնոմիկան: Գյուղատնտեսությունը (անասնապահությունը և թղթա-արդյունաբերությունը): Աշխատավորության դրությունը Ֆինլանդիայում: Ֆինլանդիան և ԽՍՀ Միությունը: Բանակցություններ յերաշխավորական պայմանագրի մասին: Ֆինլանդական բանակը:

7. Տաճկաստանը—4 ժամ

Տերիտորիան, բնակչությունը, պետական կազմը: Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Պետության դասակարգային կառուցումը: Դասակարգային և սոցիալական խմբավորումները յերկրում: Բանվորների և գյուղացիների դրությունը: Վոր դասակարգի արտահայտությունն է քեմալական Տաճկաստանը: Կոմկուսակցության դրությունը: Բանակը: ԽՍՀ Միությունը և Տաճկաստանը:

Գրականություն

1. «Турция» «Курс лекций читанных в Академии 1923 г. изд. В. Р. С.
2. Гурко-Кряжин История революции в Турции.
3. Павлов и Гурко-Кряж. — Турция в борьбе за независимость.

8. Պարսկաստան.

Ցերկիրը, բնակչությունը, տերիտորիան: Արդյունաբերության և գյուղատնտեսության դրությունը: Պետության դասակարգային կառուցվածքը: Դասակարգային և սոցիալական խմբավորումները Պարսկաստանում: Ռիզա-խանի պետական հեղաշրջման սոցիալական արժեքը: Գյուղացիության դրությունը: Ս.Ս.Հ. Միությունը և Պարսկաստանը:

Գրականություն

1. Корсун-Персия. изд. В. Р. С. 1923 г.
2. Султан Заде — Современная Персия.
3. Гурко-Кряжин История Персии.
4. Дистерваль — Британский империализм в Персии
5. *Պարբերական գրականություն*

Մյուս պետությունների մասին

1. Душак — Капиталист. госуд. госизд. ГВИЗ, 1925 г.
2. С. Я Гессен Окраинные государства (Польша, Финляндия, Эстония, Латвия, Литва) «Прибой», 1925 г.
3. Ал. Сыркин. — Государства Прибалтики ГИЗ.
4. Ф. Кон. — Современная Польша, «Красная Новь» 1924 г.
5. Раковский, «Баярская Румыния».
6. Яворски Литва... «Мос вск. Рабочий», 1927 г.
7. Информационные сборник и IV Управления Штаба РККА.

ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՒՐՍԻ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԸ

Ա. ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԸ ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿ

(Լրացում հրահանգի քաղաքական տրամաբանության 2-րդ տարվա ծրագրի համապատասխան հատվածի):

1. *Քաղաշխատանքը զորացրման և զորակոչի ժամանակ:*
2. *Զորաշարժերի նախապատրաստումը և քաղաշխատանքը զորաշարժերում:*

Բ. Քաղաշխատանքը ռազմական դրության ժամանակ

3. *Քաղաշխատանքի խնդիրները ռազմական դրության ժամանակ:*
4. *Քաղաշխատանքի ղեկավարության կազմակերպումը:*
5. *Կարմիր բանակի զորամասերի մեջ տարվող քաղաշխատանքի ձևերը և տեսակները:*
6. *Քաղաշխատանքը զորահավաքի յենթարկվածների մեջ:*
7. *Քաղաշխատանքը եշելոններով փոխադրելու և յերթի ժամանակ:*
8. *Քաղաշխատանքը պահեստի զորամասերում:*
9. *Քաղաշխատանքը մարտից առաջ և մարտի ժամանակ:*
10. *Քաղաշխատանքը նահանջի ժամանակ:*
11. *Քաղաշխատանքը ոժանդակ զորամասերում:*
12. *Աշխատանքը բնակչության մեջ:*
13. *Քաղաշխատանքը հակառակորդի բնակչության և հակառակորդի զորքերի մեջ:*

ԾՐԱԳԻՐ

ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Ա) ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՐԳԵՂ ԺԱՄԱՆԱԿ

1. Քաղաշխատանքը զորացրման և զորակոչի ժամանակ

Զորացրումն ա) Զորացրման յենթակա կարմիր բանակայինների նախապատրաստումը գյուղի աշխատանքների համար: Կուսակցության գյուղում տարած քաղաքականության ուսումնասիրությունը, խորհրդային և կոոպերատիվ շինարարությունը, գործնական ծանոթություն խորհրդների, կոոպերացիայի աշխատանքներին, և ռազմական պրոպոգանդայի ձևերի և մեթոդների հետ: Պատրաստման խնդիրները: Աշխատանքի բովանդակությունը: Պատրաստման ձևերը,— քաղպարապմունքներ, զորացրվողների դասընթացներ, ակումբային խմբակներ, մասսայական աշխատանք:

Ուղերձի կազմակերպումը: Բնակչության նախապատրաստումը և դիմավորելու կազմակերպումը:

Զորակոչ: բ) Քաղաշխատանքի խնդիրները զորակոչի ժամանակ: Կամպանիա ազդարարության մեջ: Աշխատանքը զորակոչային կայաններում: Աշխատանքի բովանդակությունը. ներքին և արտաքին դրությունը, զորակոչի խնդիրները, Կարմիր բանակի խնդիրները:

Աշխատանքի ձևերը. կոնֆերենցիաներ, ժողովներ, միտինգներ, մասսայական աշխատանք, բանավոր և տպագրական ագիտացիա:

Ագիտակայանների աշխատանքը: Զինակոչիկներին ընդունելու աշխատանքը զորամասերում:

2. Զորաշարժերի նախապատրաստումը և քաղաշխատանքը զորաշարժերում:

Զորաշարժերի խնդիրները: Քաղաշխատանքի խնդիրները զորաշարժերում: Զորամասերի քաղաքա-բարոյական դրության ամրացումը, աշխատանքը բնակչության մեջ: Զորաշարժերին նախապատրաստումը,— աշխատավորների հրահանգումը. նյութերի նախապատրաստումը բնակչության մեջ աշխատանք տանելու համար: Քաղապարատի կառուցվածքը զորաշարժերի ժամանակ:

Բնակչության մեջ տարվելիք աշխատանքի ձևերը և բովանդակությունը: Կոմբջջի և քաղղեկի դերը բնակչության մեջ տարվելիք աշխատանքների մեջ: Քաղհետախուզության խնդիրները:

Բ) ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՋԱՐԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

3. Քաղաշխատանքի խնդիրները ռազմական պայմաններում

Ոժաղակությունը հաղթանակի կազմակերպման համար,—վորպես քաղաշխատանքի հիմնական խնդիրները ռազմական պայմաններում:

Աշխատանքների բնագավառը: Կարմիր բանակը, Ռ.Ս.Հ.Մ.-ն բնակչությունը, հակառակորդի բանակն ու նրա տերիտորիայի բնակչությունը:

Պատերազմի դասակարգային եյության պարզաբանումը կարմիր բանակայիններին:

Նրանց համախմբումը կուսակցության և Ռ. իշխանության լոզունգների չուրջը: Քաղաշխատանքը և մար-

տական կոնկրետ խնդիրները (ռազմական գործողությունների քաղաքական նախապատրաստումը)։ Բանակի քաղաքաբարոյական դրության և կարգապահության ամրացումը։ Բանակի և բնակչության միջև փոխհարաբերության ստեղծումը և աշխատանքը բնակչության մեջ։ Ագիտացիա թշնամու բանակում և թիկունքում։

Քաղաշխատանքի հիմնական միջոցները,—ագիտացիա, պրոպագանդա և կազմակերպչական ձեռնարկումներ։

4· Քաղաշխատանքի ղեկավարության կազմակերպումը

Բան-գյուղ· Կարմիր բանակի քաղաքական ապարատը ռազմական պայմաններում։ Գնդի քաղապարատը։ Կոմիսարի, քաղղեկի և ակումբի պետի դերը և խնդիրները։ Գնդի և վաշտի կուս· կազմակերպության խնդիրները և աշխատանքը։ Քաղապարատի, հրամանատարության, գնդի և վաշտի կուսկազմակերպության փոխհարաբերությունները։

Քաղաժինը և նրա աշխատանքը պատերազմի ժամանակ։ Բանակի Քաղ-վարչություն։ Կապը տեղական կուսակցական, պրոֆեսիոնալ և խորհրդային կազմակերպությունների հետ։

5· Քաղաշխատանքի տեսակները և բովանդակությունը Կարմիր բանակում

Ագիտացիան և պրոպագանդան ռազմական պայմաններում և նրանց փոխ-հարաբերությունը։

Ագիտացիան և պրոպագանդիստական աշխատանքի տեսակների կոնկրետ համաձայնեցումը ռազմական պայմանների տարբեր շրջաններում։ Աշխատանքի ձևերը (միտինգներ, զրույցներ, գեղարվեստ· աշխատանք և

այլն)։ Ռ· Միության միջազգային և ներքին դրության, բնակչության քաղաքական և բարոյական և հակառակորդի զորքի դրության պարզաբանումը։

Զորամասի կարգապահության և քաղաքաբարոյական դրության ամրացումը։ Պայքար հակառակորդ կուսակցությունների ազդեցության դեմ։ Պայքար դասալքության դեմ։ Քաղաշխատավորների հրամանատարների և կոմունիստների անձնական օրինակը։ Առաջավոր անձնվեր մարտիկների պարգևատրումը։ Զորամասերի մարտական տրադիցիաների ստեղծումը։

6· Քաղաշխատանքը զորակոչի յենթարկվածների մեջ

Աշխատանքը բնակչության մեջ զորակոչի ժամանակ։ Քաղաշխատանքը զինակոչային կայանում։ Հրամանատարության, քաղապարատի, վաշտերի կոմբջիջների նախապատրաստական աշխատանքը՝ ընդունելու զորակոչի յենթարկվածներին,—լենինկյան կահավորումը, նյութական-տնտեսական նախապատրաստության, կազմակերպչական քաղաքական ձեռնարկումներ։

Զորամասի հանդիսավոր նիստի նշանակությունը։ Զորակոչի յենթարկվածների քաղաքաբարոյական դրության ուսումնասիրությունը։ Քաղաշխատանքի կազմակերպումը մեկուսարանում։ Աշխատանքի ձևերը (քաղզրույցներ, մասսայական աշխատանք, գրաղարանային սպասավորումն)։ Աշխատանքի բովանդակությունը· միջազգային դրության և պատերազմի պատճառների պարզաբանումն, Խորհրդային իշխանության ձեռնարկումների պարզաբանումը զորակոչի յենթարկվածների ընտանիքներին ոգնություն ցույց տալու, զորամասի մարտական տրադիցիաների պրոպագանդան,

բնակարանի սերտ կապի հաստատումը զորակոչի յենթարկվածների հետ, պայքար հնարավոր դասալքության դեմ։

7. Քաղաշխատանքը եշելոններում, փոխադրվելու և յերթի ժամանակ

Քաղաշխատանքի խնդիրները յերթի և եշալոններով փոխադրվելու ժամանակ,—ծանոթացում քաղաքական ներկա մոմենտի և Կարմիր բանակի խնդիրների հետ տվյալ պատերազմում, բարոյական դրության պահպանումը, պայքար դասալքության դեմ, ճիշտ փոխհարաբերությունների ստեղծումը բնակչության հետ։ Ռազմական գաղտնիքի պահպանումը։ Հրամանատարների, քաղաշխատավորների և կոմունիստների անձնական օրինակելիության նշանակությունը։

Քաղաշխատանքը եշալոններում, հանգստավայրերում և յերթի ժամանակ։ Վաշտային շարժական դրադարանի աշխատանքը։ Խաղերը և զվարճությունները։ Սգիտոպյլակը յերթի ժամանակ և նրա նշանակությունը։ Կապը ագիտկայանի հետ եշալոններով փոխադրության ժամանակ։ Թերթի ոգտագործումն եշալոններում և յերթի ժամանակ։

8. Քաղաշխատանքը պահեստի զորամասերում

Պահեստի զորամասերում տարվելիք աշխատանքի խնդիրը,—միջազգային և Խորհրդային Միության ներքին դրության, Կարմիր բանակի խնդիրների, կուսակցության և Խ. իշխանության ընթացիկ քաղաքականության սիստեմատիկ լուսաբանումը, Խորհրդային իշխանության ձեռնարկումների՝ կարմիր բանակայինների ընտանիքների ապահովության վերաբերյալ, ծանոթություն թշնամու ֆրոնտի դրության հետ, ստեղծելով կ. բանակայինների մեջ մարտական հեղափոխական պատրաստականություն։ Վաշտային բՀՀի աշխատանքը պահեստի զորամասերում։ Կարմիր բանակայինների հետ քաղպարապմունքների կազմակերպումը։ Անգրագիտության վերացումը։ Արտադպրոցական նախնական և մասսայական աշխատանքի դերը։ Գրադարանային աշխատանք։ Պատի լրագիրը և զինթղթակցական աշխատանքը։ Քաղաշխատանքի առանձնահատկությունը պահեստի զորամասերում ճակատ ուղարկելուց առաջ։

9. Քաղաշխատանքը մարտից առաջ և մարտի ժամանակ

Քաղաքական նախապատրաստումը մարտին,—կարմիր բանակայինների բարոյական դրության ամրացումը, մարտական վերելքի ստեղծումն։ Հաղթանակի մեջ վստահություն ստեղծելը։ Ծանոթություն հիմնական տեղեկություններին հետ թշնամու մասին։ Պայքար թշնամու ագիտացիայի դեմ։ Անհատական և խմբակային ագիտացիա, վորպես աշխատանքի հիմնական ձևը մարտից առաջ։

Կոմունիստների և կոմյերիտականների նախապատրաստումը մարտին։

Հրամանատարների, քաղաշխատավորների և կոմունիստների անհատական օրինակելիությունը մարտում։ Պայքար վախկոտության, դասալքության դեմ, փոքրոգինների խրախուսումն։ Մարտական-հեղափոխական վոգու պահպանումը։ Վերաբերմունքը դեպի գերիները մարտի ժամանակ և մարտից հետո։ Կարգապահության պահպանումը մարտից հետո, հոգատարություն դեպի վիրավորները և անլուր կորածները։

Հաջող մարտի հետևանքով առաջացած վերելքի ամրացումը։

10· Քաղաշխատանքը նահանջի ժամանակ

Քաղաշխատանքի հիմնական խնդիրները նահանջի ժամանակ՝—պայքար խուճապի, դասալքության և հրացանը թողնելու դեմ, քաղաքաբարոյական դրության ամրացումը։ Հրամանատարների, քաղաշխատավորների և կոմունիստների տեղը և անձնական օրինակելիությունը։ Վախկոտների և խուճապի մատնվածների վրա ազդեցություն գործելու միջոցները։

Վերաբերմունքը իր վայրը թողած բնակչության հետ։ Ագիտացիա թշնամու զորքի մեջ (թերթիկներ և այլ տպագրված նյութեր թողնելու միջոցով)։

11· Քաղաշխատանքը ոժանդակ զորամասերում

Քաղաշխատանքի հիմնական խնդիրը ոժանդակող զորամասերում՝ քաղաքաբարոյական դրության ամրացումը, ծանոթացում ընթացիկ քաղաքական դեպքերի հետ և նախապատրաստումն հաջորդ մարտին։ Ռազմական գաղտնիքի պահպանումն։ Աշխատանքը բնակչության մեջ։

Ագիտացիոն աշխատանքի առաջնակարգ դրությունը ոժանդակ մասերում (մասսայական և անհատական)։ Քաղգրույցների կազմակերպումը ընթացիկ մոմենտի և ճակատի դրության մասին։ Աշխատանքը թերթի հետ։ Խաղերի ու զվարճությունների կազմակերպումը վորպես (զուռնա, անհատական, խմբական յերգեր, շաչկի, կինո, ռադիո և այլն), աջակցություն մտածված հանգստին և նրա կազմակերպմանը։

Ագիտասյլակների աշխատանքը։

Աշխատանքի ծրագրի համաձայնեցումը ոժանդակ մասերի բոլոր պայմաններում (գնդի, դիվիզիայի, կորպուսի), հիմնական խնդրին,—միշտ պատրաստ լինելու մարտին։ Զորամասերի նախապատրաստումը մարտին։

12· Քաղաշխատանքը իր բնակչության մեջ

Բնակչության մեջ տարվող աշխատանքի հիմնական խնդիրն է՝—լայն աշխատավորական մասսաներին քաշել Կարմիր բանակի մղած զինված պայքարին ակտիվ աջակցություն և ոժանդակություն ցույց տալու համար։ Աշխատանքը կապված զորակոչի և բռնագրավումների հետ։ Կապը տեղական խորհրդային և պրոֆեսիոնալ կազմակերպությունների հետ։ Ինամատար վերաբերմունք դեպի տեղական բնակչության դույքը, կրոնական հավատը, լեզուն, ազգային սովորությունները։ Բանավոր և տպագրական ագիտացիա բնակչության մեջ։ Քաղաշխատանքը և միտինգները։ Կինո աշխատանք։ Գրականության մատակարարումը։

13· Քաղաշխատանքը հակառակորդի բնակչության և զորքի մեջ

Պարզաբանումն հակառակորդի բնակչությանը պատերազմի դասակարգային եությունը։ Զգուշ վերաբերմունք դեպի բնակչության կրոնական հավատը, լեզուն և ազգային սովորությունները։ Դասակարգային մոտեցում Կարմիր բանակի սպասավորման աշխատանքի մոբիլիզացիայի գործում (ռազմական ծանրությունները)։ Ի·Ս·Հ· Միության ազգային քաղաքականության և կառուցվածքի պարզաբանումը։ Ի· իշխանության մասսայականացումը, վորպես բանվորների և գյուղացիների իշխանություն։ Հակաազդեցություն

հակառակորդի շրջանում ԽՍՀ Միության հասցեին տարածվող բամբասանքի դեմ։ Աշխատավորական մասսաներին կարմիր բանակի ոգնության գործի մեջ գրավումը։ Հակառակորդի զինվորների մեջ Խ. իշխանության քաղաքականության պարզաբանումն։ Վերաբերմունքը հանդեպ փախստական և գերի զինվորների։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԻԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան

Ազգային գրադարան
NL0191645

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.